

399

Պրոֆ. Ա. Տերյանը

ՀԱՅՈՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

XIX — XX դ. դ.

(Սլավոված գաստիստություններ)
Ճեռագրի իրավունքով

ՄՐԱԿ VII

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՀԱՆՐԱԴՐՈՒՅՆ

ՅԵՐԵՎԱՆ

1939

Դրոֆ. Ա. Տերտերյան

ՀԱՅՈՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

XIX-XX դ.դ.


(սղագրված դասախոսություններ)

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

I.

Հակոբ Հակոբյանը միանգամայն առանձնահատուկ
տեղ է բռնում հայ գրականության պատմության մեջ:
Նու իր պոեզիայով բերում է մի ամբողջ նոր աշխարհ,
թարմ թեմաներ և գեղարվեստական նոր մոտեկում դե-
պի շոշափան նյութերը: Գործարան, աշխատանք, դա-
սակարգային կորից, բանվորական պայքարի հատու-
կենքը՝ գործադուլ, հեղափոխական հեռանկարներ-այս
բոլորը մի նոր Ամերիկա բացես հայ գրականության մեջ
և, հասկանալի յե, վոր նոր բանաստեղծի շուրջը բորբոք-
վես մի զերմ կորից՝ նրան ճանաչելու կամ ժխտելու
ուղղությամբ:

Քննադատներից վուսանք աշխատել են Հակոբյանին
կտրել, հայ պոեզիայից, հայ պոեզիայի նշանավոր դեմ-
քերից՝ Հովհաննես Հովհաննիսյանից, Թումանյանից:
Նրան առանձնապրել են, իբրև թէ՝ մեծարելու համար:
Սա, ի հարկե, սխալ կարծիք է: Հակոբյանն իր ինտեր-
նալիոնալիկմով հանդերձ, հայ գրական գեմոկրատական
հոսանքի հետ շատ սերտ կապված է. իբրև բանաստեղծ,
նա սպոնզր պես ձեռի է հայ գրականության լավագույն



891.39.09
5-54

ԱՅՀԿԱՆԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

տենդօնցները և այս իշտատով, շատ ճիշտ է նկատել Կիր-
պոտինը, ասելով թե՝ «Հակոբյանի ստեղծագործությունը
մեկ կամուրջ է հանդիսանում Նախահեղափոխական գրա-
կանության լավագույն ավանդների և խորհրդային պոե-
տիայի միջև»։ Վոր Հակոբ Հակոբյանը սերտ կերպով կապ-
ված է յեղել հայ գեմոկրատական գրականության հետ,
սրա լավագույն ապացույցներից մեկն ել այն ե, վոր Հակոբ-
յանին զնորմագին վողջունել ծն մեր հայ գեմոկրատական
լավագույն գրողները, առանձնապես հայ գեմոկրատական գրող-
ներից սրանք, վորոնք դասագրքեր են կազմել, վորոնք հայ
գրականության հետ կապված են յեղել թե իբրև դա-
սագիրք կազմողներ, թե իբրև ուսուցիչներ։ Այսպես որինակ,
շատ բնորոշ ե, վոր մեր մանկավարժ Հավարոս Աղայանը,
վոր Միաժամանակ և ժողովրդական բանաստեղծ ե, վորը
յերգել ե աշխատավոր գյուղացիության ցավն ու դարդը,
վորը գրել ե իր «Սերմնացանը», ինչպես Նաև «Ճախարակը»,
այս Ղազարոս Աղայանը սիրով իր դասագրքերի մեջ տեղ
ե տվել Հակոբ Հակոբյանի ստեղծագործությանը, և շատ
հասկանալի յե, վոր Հակոբ Հակոբյանը Ղազարոս Աղա-
յանի դասագրքերում տեղ է գտել իր ստեղծագործու-
թյան այն տարրերով, վորն ընդունել և սիրել է Ղազա-
րոս Աղայանը։ Որինակ, Ղազարոս Աղայանը սիրով տպել
ե նրա «Նամաւ ու Ղեյրաթը»։

Թումանյանը և Աղայանը, իբրև գրականության
գրեստումատիա կազմողներ, իբրևն նշանավոր «Հայ գրող-
ներ» ժողովաճպի մեջ սեղ տեղ են տվել Հակոբ Հակոբ-
յանի թե ինքնուրույն, և թե Բարգմանական վոտանավոր-
ներին։ Մինչդեռ խոշոր բուրժուազիայի գաղափարախոսները

և այս դասակարգի մանկավարժերը Հակոբ Հակոբյանին
իրենց զառապքերի մեջ տեղ չելին տալիս։ Այսպես, որի-
նակ, Գրիգոր Վանցյանի «Հայ հեղինակների» մեջ բա-
յակայում է Հակոբ Հակոբյանը, իսկ մենք գրտենք.
Վոր Վանցյանը իր դասագրքը հրատարակել է 1904թվին,
այսինքն՝ այն ժամանակ, յերբ բանաստեղծը մեր գրակա-
նության մեջ արդեն իր ամուր տեղն ուներ։ Այդ դժո-
կրատական գրողների հետ միասին շատ ջերմ վերա-
բերմունք ցույց տվեցին Հակոբ Հակոբյանի ստեղծագոր-
ծությանը նաև հայ յերաժիշտները և Հակոբ Հակոբ-
յանի վոտանավորներից մի քանիսը, ձայնագրվելով ու
ներդաշնակվելով, հայ դեմոկրատական ու բանվորական
շրջաններում շատ տարածված եյին։ Այս յերգերից են
որինակ՝ «Ապրել մրայն», «Զարկ, զարկ, ընկեր»,
«Դարբին» և այլն։ Մինչդեռ Լեռն իր գրականության
պատմության մեջ Հակոբ Հակոբյանին վոշ մի առաջ
շր տալիս, Արթանես Փափազյանը, այս գեղմոկրատական
հեղինակը, թե՛ շատ սեղմ կերպով, այնուամենայնիվ
իր գրականության պատմության մեջ Հակոբ Հակոբյանի
ստեղծագործությանը նվիրել է մի քանի ծջեր, և, վոր
կարենալով են Հակոբ Հակոբյանի ստեղծագործության
մասին Փափազյանը խոսել է համակրանքով։ Բայց, սրա
հետ միասին, պետք է նկատել, վոր նա մեր յերգչին
ավել է շատ շփոթ և հակասական մի գնահատական։
Փափազյանը պետքում է. վոր Հակոբյանի առաջին գրա-
կան փորձերը, ինչպես ինքն ասում է՝ «մրայն քնարա-
կան են յեզնը»։ Յերեքի ուզում է ասել, վոր այս վտա-
նավորները մրայն անձնական բնույթ են կրում, բայց

պետք է զարմանալ, վոր նոյն Փափազյանն այս նույն
անձնական բնույթը տեսնում է նաև Հակոբ Հակոբյանի
վերջին գործերի մեջ, որինակ «Նոր Խոավոտ» պոեմի
մեջ, վորի մասին Փափազյանը գրում է . «Հակոբ Հա-
կոբյանի ամենավերջին գործն ունի անձնական ասրումնեւ
որ և վշտերի արտահայտության բնույթ»:

Ինչ է դուրս գալիս, վոր լիրիկականությունը, հենց
նոյն Փափազյանի պնդումով, առկա յէ յեղեւ Հակոբ
Հակոբյանի թէ գրական յերախայրիքի, թէ՝ նրա հետագ
նշանավոր գործերի մեջ: Փափազյանի այս հակասությունը
մեզ առիթ է տալիս յենթադրելու, վոր նա Հակոբ Հա-
կոբյանի առաջին յերգերին քնարական տիտղոս տալով:
Թերեւս, սրանով ուզում է հասկացնել, վոր դրանք, իր
կարծիքով, կուտ գեղարվեստական արժեք ունեցող, վոշ առն
դնելով, վոշ միտումնավոր յերկեր են:

Այս կարծիքը, թերեւս, ճիշտ է, վորովհետեւ Փափա-
յանը Հակոբյանի վերջին տարիներին գրած լավագույն քս
զաքական պոեմին, վորից բնորում է նա մի շարք նմուշ-
ներ և հիշատակում է Հակոբ Հակոբյանի այնպիսի բ-
նաստեղծական գործերը, ինչպիսիք են՝ «Յետել» ես, ըն-
կօր», «Մեռան, շկորան», «Հեյ, ձեզ մատաղ»,- այս
բոլորը Փափազյանի համար հայտնայեն միտումնավոր և
քարոզչականքնութ ունեն:

Այս հանգամանքը նկատի առնելով, զարմանալի չի,
վոր Հակոբ Հակոբյանն իր մասին գրող քննադատներին
հիշատակելով, Վ. Փափազյանի անունը չի տալիս, հայտ-
նում է, վոր Եղոն իր գրականության պատմության մեջ
Հակոբյանի մասին չի խոսել և Հակոբ Հակոբյանը լրում

ե, վոր Կրթանես Փափազյանն իր մասին խոսել է, այս
լուրջունը վորոշ գնահատական և Փափազյանի այդ շրոր
կարծիքի:

Գալով բուրժուական գրողների և քննադատների՝ Հակոբ
Հակոբյանի նկատմամբ ուժեցամ վերաբերմունքին, պետք է
ասենք, վոր ինտերնացիոնալիստ գրող Հակոբյանը հա-
լանչել է նրանց կողմից: Հակոբյանի գեմ ճառայել է
մի կողմից՝ ցարական գրադնադատությունը - ցենզուրան,
և մյուս կողմից՝ բուրժուական տիրապետող հասարակական
կարծիքը:

Ինչ է սրա պատճառը: Արա պատճառը այն է, վոր Հակոբ-
յանին ընդունել և գրվատել, սա նշանակում է ընդունել
և գրվատել գալիք հեղափոխությունը: Այս բանն ի հարկե,
շնորհ կարող իրենց թույլ տալ վոչ ցարական ցենզուրան,
վոչ ել բուրժուական հասարակական կարծիքը: Հակոբյանին
ընդունել և գրվատել են առաջավոր բանվորները և նրանց
իդեոլոգները, լորոնք մեծարել են Հակոբյանին և նրան
համարել հեղափոխության մոնետիկը: Մենք նոր տեսանք,
վոր դժմոկրատ Փափազյանը Հակոբ Հակոբյանի յերախայրիքը
համարում ե լիրիկան, ործման և գրական մոռեցում ե
ուժեցել այս յերախայրիքին: Բայց այդ յերախայրիքը չի
գնահատուել նացիոնալիստական բուրժուական, և յօրը
Հակոբ Հակոբյանը 1899 թվին հրատարակեց իր բանա-
տեղմանթյունների ժողովածուն, և նոր Թարթ որդանի մեջ
գնադատ Միքան Բերբերյանը մրանգամայն բայցասական
կարծիք հայտնեց Հակոբ Հակոբյանի այս գրական յերա-
խայրիքի առիթով:

Հակոբյանին շնորհուել և թերագնահատել են նաև

հայ մէնշեվիկները, սպեսիթիկները : Տիրանոշակ հախչի
թշրանյանը թշնամական վերաբերմունք Ե Սույս ավել Հա-
կոբ Հակոբյանի ստեղծագործությանը, բոլորովին անհրմն
կերպով նա պնդում է, վոր Կուրզիկյանի բանաստեղծություն-
ները շատ ավելի արժեք ունեն, քան թե Հակոբյանի
պոեզիան : Նույնը պիտի ասել նաև մի սոցիալ-գեմոկրատ
քննադատի մասին, վորն ամեն կերպ ձգտել Ե Սույս տալ,
վոր Հակոբյանը մի առանձին նորություն չի բերում նայ
գրականության մեջ և, իբրև թե նրա քաղաքական պոե-
զիայի նմուշները հիշեցնում են Գամառ Քաթրիպային,
հատկապես Հակոբյանի «Նսան շեմ յես ձեր սիրելի պոետ
ները» բանաստեղծությանը նա համարում Ե գրված Գա-
մառ Քաթրիպայի հետեւողությամբ :

Հետո, բնորոշ Ե նաև մի քանի սպեսիթիկների վերա-
բերմունքը Հակոբ Հակոբյանի նկատմամբ : Նրանք, այս
սպեսիթիկները, ուստի հասարակական կարծիքին ներկայա-
ցրել են հայ գրականության նմուշները՝ սիստեմատի-
կորեն Հակոբյանին հաշվի շառնելով, թե «Պոեզիա եր-
մենին»-ի և թե «Երմյանսկայա լիտերատուրա» ժո-
ղովաճուն կազմելիս, այս «Եսթեորիկ» քննադատները մո-
լորեցրել են թե Վալերի Բրյուսովին և թե Մաքսիմ
Գորկուն, և նրանց գլխավորությամբ կազմված ժողովա-
ճուների մեջ բացակայում են Հակոբ Հակոբյանի ստեղ-
ծագործությունները : Իյդ բանի դեմ բողոքել Ե Ասեփան
Շահումյանը, վորը մի խիստ հորված Ե զրել և պարո-
պանել Հակոբ Հակոբյանի ստեղծագործությունները, սույս
տալով, վոր Հակոբ Հակոբյանը հայ գրականության
մեջ մի շատ կարեվոր տեղ Ե բռնում՝ մի ամբողջ դա-

սակարգի քաղաքական-հասարակական
իշխանության եւ և նա հրցում եւ այն հծղի-
նակներին, վորոնք տեղ են գտել այդ ժողովածուի մեջ,
և վորոնք, Ստեփան Շահումյանի կարծիքով, իրենց հասա-
րակական և զեղարվեատական աշխատանքներով յերբեք
ել բարձր շնչ Հակոբյանից : Շահումյանը գրում եւ «Մեր
մեջ կա մի ամբողջ հասարակական խավ, գրտակության
յեկող հայ բանվորությունը, վորի համար Հակոբ Հակոբ-
յանը ճանաչված բանաստեղծ է, նա այս բանվորության
կավերի և ուրախության արտահայտիչ է, նրա աշխա-
տանքի և կովի յերգիշը ու :

Տեսն այդ ժամանակ ուս բուրժուական քննադատու-
թյան մեջ մի արշավանք նակարեց Կան Մաքսիմ Գորկու
դեմ : Այդ քննադատներն առանց հիմքի աշխատում երին
կույց տալ, վոր Մաքսիմ Գորկու տաղանդն սպառվել է.
և այդ վայրահաջներն այս պնդումն անում երին այն ժա-
մանակ, յերբ Մաքսիմ Գորկին հանդես յեկավ և գրեց իր
նշանավոր վեպթու «Մայրը», «Մանկություն» և այլն :
Այդ քննադատների դեմ ել գրել և Շահումյանը և շեշտել,
վոր «Գորկին մերն ե» : Յեկ, խսկապես, բանվորությունը
և նրա ղեկավարները Գորկուն պահեցին, հովանավորեցին
և բորժուական այս քննադատության դեմ ծառանալով,
թույլ շտվեցին, վոր նա վճառի . և Գորկին տվեց հետազոտ
իր նշանավոր վեպերը, իր նշանավոր գրամատիկական
գործերը :

Վոշ միայն հայ բորժուական քննադատությունը, այս
և հատկապես կղերական մամուլը շատ վախեցել Հակոբ
Հակոբյանի ազդեցությունից հայ մասսայի վրա և այօն

կերպ աշխատել և նրան վարկաբեկել։ Կղճրական այս մա-
մուլը Հակոբ Հակոբյանին անվանել և «ամբոխի յերգիչ»։
«ամբոխավար» և սրանով նա աշխատել է յույս տալ, վոր
բարձր կամ գեղարվեստական գրականության մեջ Հա-
կոբյանը շահեաբ է տեղ ունենա։

Դեռք է նկատի ունենալ այն հանգամանքը, վոր, ի
հարիե, այս քննադատությունները վորոշ դեր են խաղա-
ցնել հայ հասարակական կարծիք ստեղծելու գործում և
Հակոբյանի շորջն ստեղծվել է վորոշ թշնամական վերա-
բերմունք, բայց, ի պատրի Հակոբյանի, պետք է ասել,
վոր նա ազնվա շատ լսում եր իր գաղափարական քննա-
դատներին - Սա Շահումյանին և Առարեն Սպանդարյանին
և արհամարին բուրժուական քննադատությանը։ Յեվ ար-
համարելով հանգերձ, ինձը տեղն եկած ժամանակ խփում
եր այդ քննադատությանը - որինակ, նա շատ խիստ զե-
րաբերմունք է յույս տալիս Լեոյին, այն Լեոյին, վորն
իր գրականության պատմության մեջ շատ յերկրորդագահն
հեղինակների մասին խոսելով Հակոբյանի նման կլասիկ
հեղինակին վոլ մի տող չի նվիրել։ Լեոյի մասին Հակոբ-
յանը գրում է.

և իր գրականության պատմության մեջ Թումանյանի
պես տաղանդավոր բանաստեղծին Լեռն անվանել է կոյսի
և պարի, այլև կաբինետորի յերգիչ։ Պատրի կարեց նաև
գրականության պատմության մեջ իս յերկերի մասին մի
խոսք անգամ հրշելու, թեկուց համեմած լինի այն վատ
գույներով ու անպաստ կարծիքներով»։

Վոչ միայն Հակոբյանի յերգերի, իդեոլոգիական բոված-
դակությունը, այլև այդ յերգերի տեխնիկական կողմերը,

որինակ՝ թվուն, կառեցված հարձակման են յենթարկվել
մի չար: Քննագատելով ֆոզմից: մի սխալ և անգերեթ
կարծիք ե յեղել արտահայտված այն մասին, վոր «Հակոբ
Հակոբյանն անփույթ ե վոշ միայն վոտանավորների լեզվի,
այլև կառուցվածքի նկատմամբ»: Սա միանգամայն սխալ
կարծիք ե:

Այնպիսի մի խոշոր գրականագետ, ինչպիսիք ե Լունա-
շարսկին, Հակոբ Հակոբյանի պոեզիայի վոշ միայն բո-
վանդակությունն ե մեծարել, այլ և գրական կարծիք ե
հայտնել Հակոբ Հակոբյանի յերկերի գեղարվեստական մը-
շակման վերաբերյալ:

Վորն ե Լունաշարսկու կարծիքը Հակոբ Հակոբյանի
ստեղծագործության առաջելությունների վերաբերյալ:

Առաջին. Հակոբ Հակոբյանի պոեզիան տոգորված
է ինտերնացիոնալիզմով, հատկապես անդրկովկասյան
ժողովրդների կյանքի մեջ այս պոեզիան Ֆառայել ե
իբրև համերաշխության գործոն: Հակոբյանը պատ-
կանում է մեր այն հեղինակներին, վորոնք վոշ միայն
նեղ իմաստով հայ գրողներ են, այլև անդրկովկասյան
ժողովրդների գրող: Այս առումով նա պետք է դրվի
այնպիսի հեղինակների կողքին, ինչպիսիք են՝ Մայաթ
Նովան, Առնդուկյանը: Յեզ այ: Ժամանակ, յերբ ազգայ-
նական գաղափարներն անդրկովկասյան ժողովրդների մեջ
դասակարգային կրգեր ենին Շրանում, Հակոբ Հակոբյանն
իր պոեզիայի միջոցով նպաստում եղ այդ ժողովրդների
սերմ բարեկամությանը: Նրան սիրել են և՝ հայ բան-
վորները, և վրայի բանվորները, և ագրբեզանցի բանվոր-
ները:

Յերկրորդ առավելությունը, վոր տեսնում է հունա-
չարսկին Հակոբ Հակոբյանի բանաստեղծության մեջ, սա
այն է, թե Հակոբյանն այն հազվագյուտ դեմքերից մեկն
է, վոր պրոլետարական պոնդիայի հիմնավորման առա-
ջին յերախտավորներից մեկն է յեղել: Նա այս ուղղությամբ
ճանապարհ ծ բայ արթէ ուրիշների համար, յե-
րավամբ անվանում է Կլասիկ հեղինակ:

Այնուհետև հունաշարսկին Հակոբյանին յերջանիկ
հեղինակ է համարում այն առումով, վոր Հակոբյանը տե-
սել է իր սույնալական և քաղաքական իդեոլորի կատարումը,
ինչ վոր նա յերազել է ապագա հասարակակարգի նկատմամբ,
ինչ վոր ցանկացել է իրագործվի, Հակոբյանն այս բոլորն իր
աշխով տեսավ և վոշ միայն տեսավ ապագա հասարակարգը,
այլև յերգեց և ներբողեց նրան:

Յեզ, վերջապես, հունաշարսկին առանձնապես շեշտում
է այն հանգամանքը, վոր Հակոբյանը դարձել է Միու-
թյան բոլոր ժողովրդների համար սիրելի հեղինակ: Նրան
արդեն թարգմանել են Միության մեջ մտնող գրեթե
բոլոր ժողովրդների լեզվով: Նրան կարդում են, գասա-
գոքերի մեջ տեղավորված ե, նրան բեմից արտասանում
են և այլն: Յեմ Հակոբյանն իր գործունեյությամբ մա-
նակցում է սույնալիստական շինարարությանը:

III.

Հակոբյանի կյանքը և գրական - հասարակական գոր-
ծունեյությունը մեզ համար շատ ուսանելի է ողմեր ունի:
Ուսումնասիրելով նրա կյանքը և գրական գործունեյու-

թյունը, մենք վոչ միայն տեսնում ենք բանաստեղինի
անցած ուրին, այլև թե հին ուժիսի որոք ինչպիսի
պայմանների մեջ ե դրված յեղել բանվորության կուլ-
տուրական կյանքը և նրա պայքարի յերեվույթները:

Հակոբյանը սկսեց իր գրական գործունեյություն ան-
ցյալ գարի 90-ական թվականների սկզբից, այսինքն՝
Անդրկովկասյան բանվորական շարժման արշալուցին,
և իր գրական գործունեյությանը նոր վորակ տվեց 900-
ական թվականների սկզբին ու հանդիսացավ սոցիալիս-
տական ռեալիզմի հիմնադիրը Անդրկովկասյան ժողո-
վրդների մեջ: Ինչով բացատրել նրա այդ խաղոր դերը:
Ի հարկէ, այստեղ նշանակություն ե ունեցել վոչ միայն
հեղինակի տաղանդը, նրա հասարակական ջիղ ունենալը,
նրա հոտառությունը և քաղաքական զգոյնությունը, այլև
այստեղ խոշոր դեր ե կատարել այն հանգամանքը, վոր
նրան քաղաքականացնելու կոփել և դաստիարակել Ե ան-
դրկովկասյան բոլշևիկյան կուսակցությունը և հատկապես
ընկեր ԱՏԱԼԻՆԸ:

Մի քանի խոսքով հրշեցնենք Հակոբ Հակոբյանի
կյանքի այն կարեվոր փաստերը, վորոնք արժեքավոր են
նրա գեղարվեստական ստեղծագործության համար:

Հակոբյանը մնացել է 1866 թ. և մեռել 1937 թ. նո-
յեմբերի 13-ին: Նա մնացել է Գանձակում, նրա պապն աշուղ
ե յեղել, իսկ ինքը հոր կողմից արհեստավորական հագում
ե ունեցել: Նրա հայրը յեղել է կողկակար, հետո նա,
վորովհետեւ աղքատ ընտանիքի կազակ ե յեղել, հայ աղ-
խատելու համար անցել է Բագու, նավթահանքները, ճա-
ռայել նախ՝ իբրև բանվոր և ապա՝ վորպես գործակատար:

Ըստ շժվար պայմանների մեջ եւեղել նաև Հակոբյանի ուսումնառության գործը : Նա չի կարողացել միջնակարգ դպրոցն ավարտել, 1886թ. նրան դուրս են արել գրման դպրոց, վորովճետե Հակոբյանը բաղոքել ե հայ դպրոցների դական դեմ և առաջարակ դպրոցում աշակերտական կազմակերպության անդամ ե յեղել և մասնակցել ե հեղափոխական շարժումներին :

Հակոբյանն իր հիշողությունների մեջ խոսելով իր կյանքի շժվարին պայմանների մասին, ասում է . վոր կյանքը իրեն համար յեղել ե մի գածան դպրոց : Շարունակ նյութական կարիքի մեջ ե յեղել, վորովճետե ճանրաբեռնվան ե յեղել մեծ ընտանիքով և որվա պարենը հայթայրելու խնդիրը նրան հնարավորություն չի տվել ամբողջապես նվիրվելու գրականությանը : Ըստ հույսի ե Հակոբյանի այն խոստովանությունը, թե ինքը սիրում եր գրել առավոտները, բայց պաշտոնը թույլ չեր տալիս և նա պետք ե զուապեր կամ գործարան, կամ դեպի բանկ, վորոնք նրան կանչում եյի : « Առավոտ, - բացականշում ե բանաստեղծը, - վորքան սիրելի, վորքան կարուտալի յես յեղել ինձ համար, և վորքան արգելյալ, վորքան տանջալի և ժատ » :

« Գործի յելիր, շուտ,

Ուշանաս՝ փողոց կնետվես անջուշտ » :

Հետո, պետք ե նկատի առնել այն Յանր պայմանները, վոր Հակոբյանն իր կաշվի վրա զգացել ե Յառաջության պայմաններում : Նա խոստովանում ե, վոր որեկան 10-12 ժամ աշխատելով հոգնած տուն եր գալիս և, ի հարկե, գրական գործունեյության համար նրա ուժերն սպառվան եին լինում : Այդ ծանր պրկանքներին Հակոբյանը սովոր

Ե յեղել դեռ հանկությունից : Նրա կենսագիրները պատմում
են, չոր Հակոբյանի թե՛ մանկությունը, և թե՛ պատանե-
կությունն անցել էն շքավոր պայմաններում : « Մի հատիկ
խոնաց ու մաշտ սենյակ, ուր 5 հոգի եյրն ապրում », Հա-
կոբյանը դաս սովորելու անգամ հարմարություն շռւնքը
է, շնայան այս զրկանքներին, Հակոբյանն անգամ պա-
տանեկան տարիներին ցուց է տվել հասարակական
գործիր Գիդ, որինակ՝ Բագվում յեղան ժամանակ և մասնակ-
ցել, և բանվորական ինքնակրթական խմբակներին, աշխատափ-
ցել և թերթերին և գրել բանվորների դրության մասին, հատ-
կապես նրան պրաղեցրել և բանվորների սույնալական
ապահովագրության խնդիրը : Հետո նա սերտ կապ է պահել
բանվորական առողջապահությանը հետ, իր բանաստեղծություն-
ները նա սիրով կարդացել են բանվորների, առաջ և նրանց
խրախուսանքը միշտ ել վոգեվորել են բանաստեղծին :

Յեթե բանվորները նրան խրախուսել են, սրա հետ միա-
սին նրան հարվածել էն թե՛ զարական ցենզուրան, և թե՛
բուրժուական հասարակակարգը : Յերբեմն նա ստրպված է
յեղել գրել ակնարկներով, բայց հայտ կերպով նա չի կա-
րողացել իր մտքերն արտահայտել և այս հանգամանքը
բարդականաշար տանժաղիկ է յեղել բանաստեղծի համար :
Բանաստեղծը խոստովանում է, թե յես միշտ խուսափել եմ
խնդրված և ճռում արտահայտություններից :

Հակոբյանը շատ շուտ է սկսել գրել : Նրա ստեղծա-
գործական տաղանդը յերեվան է յեկել հենց նրա պա-
տանեկան տարիներին : Նա իր գրական գործությու-
թյունն սկսել է աշակերտական թերթում : Այդ ձեռա-
գիր թերթում նա սկսել է գրել 1889 թվականից : |

Առաջին ապագրական աշխատանքը ևս պետքեւ թիվինում
լույս տեսնող « Թուրք » ամսագրում, 1893 թ.: Գրական գոր-
ծություններուն հետ մրասիք Հակոբյանն առաջ եր տանում
և քաղաքական վորոշ գործունեցություն, և ինչպես գրա-
կան գործունեցությունը . այնպես եւ քաղաքական գործու-
նեցությունը ևս սկսել է աշակերտական խմբակներին
ժամանելով: Ես ինքը պատմում եմ, թե ինչպես աշակեր-
տական գաղտնի խմբակներում հայ գրողների մասին ոե-
ֆերատներ են կարդացել և այդտեղ խոսել են, թե ինչպես
ցարից հայ նշանավոր հեղինակներին հալաձել են:
Այդ խմբակներում հատկապես խոսվել են Աբովյանի և
Նալբանդյանի մասին: Այդ առիթով Հակոբյանը պատ-
մում է, թե՝ սճնք խոսել ենք իրար ականջի փսփսալով,
վորոշնետե ցարական դաժան ուժիմը հետապնդում եր
այդ աշակերտական խմբակներին և այդտեղ արտասահ-
կան ճառներին:

Հակոբյանը Շատարի մնացել է Բագվում և նրա
ընազորության կազմակերպման վճռական շրջանում ևա
հեղափոխական լիցք ե ստացել, բանվորական միջավայրում:
Նա առաջիններից մեկն ե յեցել, վոր 90-ական թվա-
կանների սկզբին մասնակից ե մայրսմեկյան բանվորա-
կան առներն: 1894 թ. Հակոբյան տեղափոխվել է Թիֆ-
լիսի, և մտել ճառապետական հաշվապահի պաշտոնով:
Թիֆլիսիրում ունեցած նրա գործունեցությունը չի պրայել
ցարական ժանդարմերիայի աշխարհ, նրան ձեռքակալել
են, և ետեխի բանտառմ նստեցրել : այնուհետև մի քա-
նի անգամ խռովարկություն են կատարել նրա մոտ և այլն:

1904 թվին Հակոբյանը լուել է բոլշևիկյան կու-

սակացության մեջ : Հատկապես հիշատակում է նրա ակտիկ գործունեյությունը , վորպես պրոպագանդիստ : Նրա տունը հեղափոխականների համար յեղել է վորպես հավաքատեղի : Յեզ Հակոբ Հակոբյանն իր մոտ պահել է կուսակցության արհեիլը :

Այս կողմից շատ հետաքրքրական է նրա մի հրցողությունը : Յերկար տարիներ բանկում ձառայելով՝ նա վոր մի հաճույք չի զգացել : Նա այդ աշխատանքը հարեադրույան եր կատարել մի կտոր հայր համար , բայց ինչպես ինքն է խոստովանում , բանկը նրան մի այլ ձառայություն է մատուցել : Բանկը նրան հնարավորություն է տվել , վոր նա այնտեղ թագանի հեղափոխական արիսլը , մրաժամանակ բանկը նրան հնարավորություն է տվել արտասահմանից նամակներ ստանալու :

Կարեվոր է նշել , վոր Հակոբյանի մի քանի վոտանակորները 1905 թ . հեղափոխության ժամանակ տպվում եին . վորպես քաղաքական թույրկներ և մի քանի հազար որինակներով տպվում և տարածվում եին բանվորական թաղամասերում : Որինակ , վորպես այդպիսին տպվել է «Հեյ Ձեզ մատաղ , բանվոր տղերք » :

Սրա հետ մրասին պետք է նշել , վոր Հակոբյանը մասնակցել է կովկասյան Բուշեվիկյան մամուլին և հատկապես իր վոտանակորները տպագրել տվել «Կայճ» թերթում : Բանվորներն իրենց կողմից աջակցություն են ցույց տալիս պրոլետարական յերգին , և ուսակցության ժամանակ նրանց նախով տպագրվում է Հակոբյանի յերգերի ժողովածուն :

Եատ կարեվոր է նաև Հակոբյանի գործունեյության մի այլ կողմը : Սա այն է , վոր Հակոբ-

յանը և, ինչպես և Մաքսիմ Գորկին, վոյ միայն յեղել է պրոլետարական գրող այլև պրոլետարական գրականության կազմը պատրաստող։ Նա Մաքսիմ Գորկու նման բանվորական գրողներին ոժանդակել է, Նրանց յերգերը խմբագրել, չուցմունքներ տվել և առհասարակ ամեն կերպ աշխատել, վոր իրեն շրջապատի մի այնպիսի պրոլետարական յերիտասարդությամբ, վոր կարողանա ապահովել վաղվան որը։ Նա մի քանի ժողովածուներ և ճրանովել վաղվան որը։ Նա մի քանի ժողովածուներ և ճրանովել մերիլիսի յեղան ժամանակ և այս ձեվով պրոլետարական գրական շարժումը կազմակերպողներից մեկն է յեղել։ Նրա հրատարական ժողովածուներն են «Կարմիր Մերսկ» և «Բանվորի ալբոմ»։ Այստեղ նա առաջադրել է զեղարվեստը կյանքի համար սկզբունքը և կովել է արվեստը արվեստի համար թերի դեմ։

Այստեղ նա տպել է հունաշարսկու մի հոդվածը՝ «Քեղարվեստը կյանքի համար ու վերնագրով»։

Հակոբյանի այս բեղմնավոր գործունեյությունը գնահատվել է Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխության ժամանակաշրջանում և 1923թ. Հակոբ Հակոբյանն ստացավ Վրաստանի և Հայաստանի Կենտգործկուների կողմից ժԱԶՈՎՐԴԱԿԱՆ ԲԽՆԱԽՏԵՂԾԻ բարձր կոչումը։

Արանով Խորհրդային հասարակայնությունը նշեց, վոր Հակոբյանն այժմ ապրում է իր յերգան կարմիր գարունը, վոր նա մասնակցում է սոցիալիստական դինարարությանը և խորհրդային գրականության զարգացման գործին։ Հատկապես խոշոր է Հակոբյանի նշանակությունը հայ պրոլետարական խորհրդային գրականության ստեղծման գործի մեջ։ Նա խրախուսել է մեր յերիտա-

սարդ գրողներին և շատ խորհրդային գրողներ մեծ յերախ-
տիքով են խոսում Հակոբ Հակոբյանի այս ոճանդակու-
թյան մասին:

«Պրավդան» Հակոբ Հակոբյանի մահվան տարեղար-
ձի կապակցությամբ հրշասակելով այն Ցանք պայման-
ները, վոր նա ապրել ե. գրում ե.

17-050 «Ինչ ուժեղ կամք եր հարկավոր. վոր հաղթա՞արեր
այդ դժվարությունները և դառնար առաջնակարգ բա-
նաստեղծ, բայց Հակոբյանը ավելին կատարեց: Նա ընտ-
րելով ինքնուրույն ստեղծագործական ուղի, վճռականա-
պես և խիզախորեն ժխտեց բուրժուական և նացիոնա-
լիստական գաղափարները, վորոնք այդ ժամանակ իշխում
եին նայ գրականության մեջ: Նա դարձավ ժողովրդա-
կան բանաստեղծ»:

«Պրավդայի» այդ հոդվածը լերնագրված ե այսպես
«Նայ նորտգույն գրականության կրասիկը»:

III.

A 2933 Հակոբյանն ինքը տվել է իր հասարակական-քաղա-
քական աշխարհայացքի ընդհանուր բնութագիրը: Իր մի
նշանավոր վոտանավորի մեջ, դիմելով նացիոնալիստա-
կան բուրժուակային, ասում ե. վոր «Նման չեմ
յես Ձեր սիրելի պոետներին»: Հակոբ Հակոբյանը վոչ
թե միայն գրող ե, պրոլետարական բանաստեղծ, այլև
հեղափոխական մարտիկներից մեկը, ինչպես արդեռ մենք
այդ տեսանք, յերբ խոսեսինք նրա կյանքի մասին. նրա
տունը յեղել ե հեղափոխական պրոպագանդայի միութախ:

Հակոբ Հակոբյանն այդ ոքախի մեջ լոյց միայն

որիշներին և գաստիարակում, այլև ինքն իբրև գորոշ կապ-
մակերպվում է, շատ սերտ կապ պահպանելով պրոլետա-
րական հեղափոխության ղեկավարների հետ, բոլշեվիկյան
անլեգալ գրականությունը վորոշ չափով անցնում է նրա
ձեռքով և տարածվում և այս անլեգալ գրականության մեջ
յեղած ցուցմունքները վոյ միայն քաղաքական կովի, այլև
կովտուրական մի շարք խնդիրների մասին, լինել ու վզնի
Հակոբ Հակոբյանի ստեղծագործությանը:

Հենինը 1905 թվականին գրում է իր նշանագործ հոդ-
վածք, վորը վերնագրված է «Կուսակցության քաղաքակա-
նությունը և քաղաքական գրականությունը»: Այս հոդվա-
ծում նա հանճարեղ կերպով քննադատում է բուրժո-
ական գրականությունը և տալիս է պրոլետարական գրա-
կանության ընդհանուր ուրվագիծը:

Ինչ եր պահանջում է ենինը պրոլետարական գրա-
կանությունից: Ամենից առաջ և առաջին հերթին ժողովոր-
դայնություն, այսի վոր հեղինակը պետք է իրականու-
թյանը, կանքի բազմակողմանի խնդիրներին նայի ժողո-
վրդի հայացքով, ժողովրդական տեսանկյունով:

Յերկրորդ՝ գրողը պետք է ունենա հեղափոխական հե-
ռանկար, այսինքն նա վոյ միայն պետք է տա ցարկութի-
ւ և բուրժուական տիրապետության որոք յեղած սուկ փաս-
տերը: այլ և այդ փաստերի ցարգացման ուղին, նրանց
դինամիկ շարժումը դեպի սովորական հեղափոխու-
թյունը: Հեղինակը վոյ միայն պետք է տա այսորվա նկա-
րագիրը, այլև զալիքը և այսորվա մեջ նա պետք է տեսնի
զալիքի սաղմերը:

Հենինը Տուստոյին համարում է ուսական հեղա-

փոխության հայելի, վորովհետեւ Յոլստոյը վոչ միայն տալիս ե իրականությունը, այլև դիմակներ ե պաստում՝ տալիս ե իրականության այն պատկերը, վորը տանում ե դեպի առաջիկա հեղափոխությունը :

Յերրորդ՝ Հենինը գրողից պահանջում ե կյանքի ճշգրիտ ճանաչողություն : Այս ճշգրիտ ճանաչողությունը անպայման անհրաժեշտ է, վորովհետեւ գեղարվեստական գրականությունը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ կյանքի իմացության մի յեղանակ : Այս իմացական կողմը անպայման շեշտվում է, վորովհետեւ հեղինակն այն շափով ե մեծ, վոր շափով նա կարողանում է իրականության գիտական, ստուգ բարեւնման միջոցով տալ իր գեղարվեստական պատկերացումը :

Կյանքի այս ճշգրիտ իմացության հետ կապում ե Հենինը իրականության ստուգ արտացոլումը, ասելով, վոր ստուգ արտացոլումը աղդեն մի շափանիշ ե վոչ միայն հեղինակի գեղարվեստական արժեքը չույց տալու համար, այլև նրա տաղանդի շափը վորոշելու համար : Ինչքան հեղինակը խորն ե արտացոլում կյանքը, այնքան հեղինակը մեծ հեղինակ ե, տաղանդավոր հեղինակ ե և ընդհակառակը փոքր հեղինակ ե այն հեղինակը, վորը կյանքը տալիս ե մակերեսորեն, այսինքն տալիս ե միայն տկլոր փաստերը, առանց այդ փաստերի դինամիկայի, կամ յեթե գործածելու լինենք Մաքսիմ Գորկու արտահայտությունը՝ սագը տապակում են փետուրերով՝ այսինքն փաստերը շեն ոսումնասիրում, կարեռը անկարեռից պատում, այլ տալիս են խառնիքուն, անսիստեմ :

Հակոբ Հակոբյանը Հենինի այս չուցմունքներն իր համար ուղեցույց ե դարձել և իր գրական պրակտիկայի

մեզ և նիւյան այս պատվերներն իրագործել : Ինքը՝ բա-
նաստեղնը մի խոստովանություն ունի, վորի մեզ պարզ
յերեվուս ե, թէ նա բանաստեղնի կոշումն ինչպես ե հա-
կանուս: Բանաստեղնի ուժը ժողովութիւն հետ ունեցած նրա
կապի մեջ ե: Ինչ շափով բանաստեղնը վոտի տակրի հո-
ղը բաց ե թողնում, այն շափով ել նա դառնուս ե մա-
կերեսային: Հակոբ Հակոբյանն ասում ե. « Յես միշտ
նկատի յեմ ունեցել բանվորներին, գյուղացիներին և աշա-
կերտ-ուսանողական մասսային և վոյ թէ շմահավան ին-
տելիգենցիային »: Իհարկե, խոսելով ինտելիգենցիայի մա-
սին՝ Հակոբ Հակոբյանը նկատի ունի բորժուական այն
եսթես ինտելիգենցիային, վոր արվեստի մեջ վորոնուս ե
միայն հաճույք և մոռացոնք իրականության նկատմամբ,
վոր պոետիան համարուս ե մի միջոց կյանքի ձանք
խնդիրները թողնելու և ամպաճրար վոլորտներում ժամանу
կատարելու: Յերբ վոր մենք մի ակնարկով նայում ենք
Հակոբ Հակոբյանի անցած գրական ուղուն, տեսնում
ենք, վոր նույնիսկ իր ուսումնառության շրջանում,
յերբ նա դեռ հայտնի չեր իբրև բանաստեղն, տա-
կավին գիմնազիայի աշակերտ յեղան ժամանակ, իր ա-
ռաջին բանաստեղնական փորձը տալիս, նա ունեցել
ե մի շարք քաղաքական յելույթներ, վորոնք հակա-
ցարական բնույթ են ունեցել:

Դիմնապիայուս Հակոբ Հակոբյանը գրել ե մի
շարք վոտանավորներ, վորոնք ուղղված են յեղել Ալեք-
սանդր Յ-րդի դեմ, այն դահիմի դեմ, վորին բոր-
ժուական իշխուոգները « խաղաղարար կայսր » են ան-
վանել, իսկ Հակոբ Հակոբյանը նրան ձաղրուս ե

և անլիւսում «Հյուսիսի ագռավ»:

«Հակ յե Ձեզ, Մեջքներիդ տանել այն գաճը,

Վորի վրա Նստած է հյուսիսի ագռավը»:

Հենց յր գրական բեմելի առաջիւ շրջանում Հակոբ Հակոբյանը վոգեվորվում է արվեստը կյանքի համար նշանաբանով. շատ խիստ կերպով պայքարելով արվեստը արվեստի համար սկզբունքի դեմ: Հակոբյանը դրվագել է բանաստեղծի մարտիկ, կոփող, պայքարող լինելու կոչումը՝ «Մի այլ ճանապարհ գոյություն չունի»:

Բանաստեղծը իր ուղադրությունը սեվեռում է Քրոնաթոր և կարիքի աշխարհի վրա և յերես և դարձնում պառնասական եսթետիկայից: Հակոբ Հակոբյանը բերում է մի շատ կարեվոր նորություն, սա այն է, վոր նրա վոտանակորների մեջ արծարծվում է ազգությունների համերաշխության գաղափարը: Նա արտահայտում է այն ճշմարիտ միտքը, թե «Ի՞նչ նմանները ամեն տեղ նման կրակով են այրվում»: Կյու տեսակետը նրա ժողովրդայնության մեխն է, նրա ինտերնացիոնալիզմի վողնաշարը, վոր առանց ազգությունների խտրության, բոլոր աշխարհի պրոլետարները պետք են միանան: Ինչու, վորովհետեւ թշնամին բոլորի համար մեկ է՝

«Ժողովուրդների բերանն են փակում

Գործարանատեր, վոստիկան, տերտեր,

Աշխատավորի արյունը, աշկում»:

Յեզ կարմանալի շե, վոր Հակոբ Հակոբյանը յերբ վոր իր համար գրական պսեվդոնիմ վերսրեց՝ նա ընտրեց «Պրոլետար» անունը: Այդ բոլորը նկատի առնելով, յերբ վրացական կենտգործկոմը 1923 թվին Հակոբ

Հակոբյանին տվեց ԱՊՐՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ մեջ կոչում՝
որա հետ միասին գրատակեց, վարքանաստեղծն իր ամբողջ
կյանքում « Ձի դավաճանել իր ընդգրկած նպատակին »:
Յեզ իսկապես, ինչպես և մյուս խոշոր բանաստեղծները,
այնպես ել Հակոբ Հակոբյանը իր գրական կոչման իշխ-
ողիրները միշտ ել հաշվի յետ առել և իր բանաստեղծու-
թյունների մեջ միշտ իրեն հաշիվ ետքել, թե վորն է
կյանքի նպատակը, վորն է այն աշխարհը, վոր նա պետք
է յերգի և վորն է այն հակնդեմ դասակարգը, վորի դեմնա
պետք է Ցառանա, վորպես բանաստեղծ :

F Այսպես, որինակ « Ամբոխն իմ աշխարհը » վոտանա-
փորի մեջ նա տալիս է իր դավանանքը՝ իր կրեպոն:
Բանաստեղծը ընտրում է զահագործման դեմ պայքարելու
ուղին, նա հանձն է առնում կարիքի աշխարհը յերգելու
պարտականությունը: Իսկ Հակոբ Հակոբյանը աշխատա-
վորությանն իր համակրանքը պարզեցելով՝ միենայն ժա-
մանակ նա չի բավականանում միայն աշխատավորական
կյանքը սառնասրտությամբ նկարագրելով, այլ տալիս է
և այս կյանքի առաջ-մշիշը՝ դասակարգային պայքարի
մթնոլորտը: Այսպես, որինակ, նրա « Աշխատանքի յերգերի »,
« Գործարանների » և « Քաղաքների յերգեր »-ի շարքերը
տալիս են արգյունաբերական քաղաքում ճավավող դասա-
կարգային կովի պատկերացումը և զարմանալի չե, վոր
զարական ժանդարմերիան ամենից առաջ իր ուղագրությունը
դարձրեց Հակոբ Հակոբյանի վրա՝ միշտ նրան պահելով
իր տեսողության դաշտում և մի շարք անգամ նրա
բնակարանում խուզարկություններ կատարելով: Այս
« ուշադիր վերաբերմունքը » զարական գրատիչ անգղնե-

րի կողմից նշան եր , վոր Հակոբ Հակոբյանը կապ տներ անցուցտ իր մասսայի հետ , վոր նա վոյ թէ կաբինետ-ցիրն բանաստեղծ եր , այլ տրիբուն եր : Յեզ իսկապես , իր մի շարք բանաստեղծությունների մեջ նա յերես և թեքում այն սուբյեկտիվ , լալկան կամ , ինչպես Գյորեն և ասում . հրվանդանոցայիրն բանաստեղծությունից , հակագրպելով իր ժամանակակից լալկան քնարերգուներին . ցուց տալով . վոր բանաստեղծը պետք է լինի վոյ թէ սուպան վերքերի վրա սուց անող . այլ ոչ վոր վերք և տալիս , նրա շեմ ծառացող :

Հակոբ Պարոնյանն ասում է . « Թերության վրա լալ ամենամեծ թերությունն ե » : Հակոբ Հակոբյանն ել իր կողմից կյանքի վերքերի վրա լալը համարում է ամենամեծ թերությունը և նա գրում է :

« Կիշտը շոյող ու փայփայող ,
Յերգը դարձավ ձանձրալի ,
Յեզ վողբուլաց մխիթարող ,
Նվազն ել չե՛ ցանկալի » :

Հակոբ Հակոբյանի քաղաքական - հասարակական աշխարհայացքը շատ ցայտուն արտահայտություն ստացավ 1905 թի հեղափոխության դարաշրջանում :

ԼԵՆԻՆԸ 1905 թ. հեղափոխության հիմնական խնդիրները համարել է յերեքը առաջին միապետության կործանում և հանրապետության պահանջ , յերկրորդ՝ կազմաձատերերի վերացում և նոզը գյուղայինությանը հանձնում . յերրորդ՝ ուժ ժամյա բանվորական որ : ՀՕՆԻՆԸ այս հեղափոխությունն անվանում է բարձուաշ-դեմոկրատական հեղափոխություն , մի հեղափոխություն ,

կորի մեջ ամենաազատար ուժը բանվորությունն եր կովի գենքերով՝ այսինքն գործադուլով և ապստամբությամբ :

Հակոբ Հակոբյանը հենրին այս պահանջները 1905 թ. կերպերյալ՝ դարձրեց իր բանաստեղծության վողնաշարը: Իմենիկ առաջ նա դեմ առ դեմ կանգնեցրեց կապիտալիստական քաղաքի մեջ կովող ուժերը՝ բորժուակիային պրոետարիատին, իրար դեմ կանգնեցրեց իրեն այսուհետք: Հակոբյանը վոշ մի տարակուանք չուներ, վոր բորժուակիայի պիտադեմ պետք նվաճի բանվորությունը: Վերջինիս մասին Հակոբյանը գրում է.

Նա ել իր խոհերը, իր հայացքները ունի իր գերնպատակ,

Վորի նով թափին դի դրմանալու վոշ մի ամբարտակ:

Հակոբյանը 1905 թվի հեղափոխության ժամանակ յերգել է բանվորների, և գյուղակիների միասնական ճակատու րնդդեմ բորժուակիայի ու ցարիկմբ: Յեզ մենք տեսնում ենք, վոր հենց 1905 թվի հեղափոխության նախորյանք, վոր հեղափոխության գործադուլային շարժումների հետ միասին, Բուսաստանում ձայր են առնում ազրարային շարժումները ուղղված միապետության և կալվաճատիրության դեմ:

1905 թվականի հեղափոխությանը մասնակցեց նաև անդրկովկասը, շնայած նրան, վոր ցարիկմը ազգամիջյան կորիզներ ստեղծեց, աշխատելով Անդրկովկասը հեռու պահել հեղափոխության աշխեցությունից: Գորիայի գյուղակիության ապստամբության հետ միասին 1905 թվին ձայր առավ նաև հոգու գյուղակիության ապստամբությունը: Կալվաճատիրության դեմ ուղղված

գյուղացիական այս ազստամբությունները այդ նույն կարգահատերներին 31 միլիոն ռուբլու շաք վճառ պատճենեցին, վորովիր վճառու շարիկամբ ահապարեց զյուղացիական բաների միջոցով մեջ տեղի կերպութել:

1905 թվի հեղափոխությունը շատ խոշոր միջավայրին արձականք կտավ: Առ իր ազդեցությունը գործեց վոչ մրայն արևմուտքի, այլև արևելքի՝ Ֆրեսատանի, Պարսկաստանի, Տաճկաստանի վրա: Լենինը նկատում է, վոր «1905 թիվը արևելյան անշարժության վերջն է»:

Վորտեղից պետք է սկսենք 1905 թվի հեղափոխության սկիզբը: Ենու հարցը տվել է նույն Լենինը և պատասխանել, վոր «1905 թվի հեղափոխության սկիզբը պետք է համարել Շունգարի 9-ը, Կարմիր կիրակը»:

Այս մասին Ստալինյան կուսակցության պատմության համառոտ դասագրքի մեջ գրված է հետևյալը. «Հունվարի 9-ից հետո բանվորների հեղափոխական կորպը ստանում է ավելի սուր քաղաքական բնափորություն: Ցնտեսական գործադուլներից և համերաշխության գործադուլներից հետո բանվորներին անցան քաղաքական գործադուլներին և չույցերին, իսկ տեղ տեղ պինդած ընդդիմադրություն շարական կործերի ժեմ: Առանձնապես համառ և կազմակերպված բնույթ եյին կրում գործադուլները խոշոր քաղաքներում, վորտեղ կենտրոնացված եյին նշանակալի թվով բանվորական մասսաներ - Պետերբուրգում, Մոսկվայում, Վարշավայում, Ռիգայում, Բազմում. (ուստական հրատարակություն, եջ 55):

1905 թվի հեղափոխությունը, ինչպես ասացինք, Լենինը անվանում է բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն, վոր շահով պրոլետարիատը գնում էր գյուղացիության հետ մրա-

սին շնորհացնելու բորժուապիսայի հակամարտությունը։ Աս Հենինը համարում է հեղափոխության առաջին ետակը (հանգըրքան)։ Այդ շրջանը նա անվանում է պրոլետարիատի և զյուզակության հեղափոխական-դեմոկրատական դրվագատուրա։

Այնուհետև պրոլետարիատը գործում է աղքատ գյուղապետության հետ, շնորհացնում կուլաֆանթյան ոպովիսիան, կավու բորժուապիսայի դեմ, նրանց սեփականապրկում և իրագործում սոցիալիստական հեղաշրջումը։

1905 թվականի հեղափոխության ժամանակ չարը և բորժուապիսն կարողանում էն իրենց գոյությունը պահպանել, սաստիկ չնցվելուց հետո, և սրանից հետո սկսվում է ռեսուզիայի շրջանը։ Հենինը պատկերավոր կերպով ասում է, վոր «Սարը բարձրացանք և այնտեղից ընկանք հովիտը»։

Ինեականի շրջանում հականեղափոխությունը զլուխ է բարձրացնում, բանտերը լցվում են հեղափոխականներով և սկսում են գործել ցարական կախաղանները։

Գրականության մեջ բորժուական ինտելիգենտները մի շարք հականեղափոխական գրվաճքներ են հրատարակում, վորոնց մեջ նրանք աշխատում են վարկաթեքել հեղափոխությունը և մեծարել ցարիկությունը և կալվաճատիրությունը։ Այդպիսի գրվաճքներ «ԵԽԿ» հոդվածների ժողովածուն։ Ինեականի շրջանի գրականությունը Մաքսիմ Գորկին համեմատում է հրվանդառ որդանիկմի հետ, վորի վրա յերեվակող ռոռուցները կոչում են տալիս արյան անմաքրությունը։

Գեղարվեստական գրականության մեջ իշխում է սանինիզմը, սեռամոլությունը։ Մանինիզմի հետ միասին ձայր է առնում Միստիկական գրականությունը։ Միստիկական գրականության հետ միասին աշխատում են վարկաթեքել այն բոլոր առաջավոր գաղափարները, վորոնցով կողեւորվել են հեղափոխական բան-

վորությունը և գյուղացիությունը : Իդեակրկությունը դառնում
է պաշտամունք և զիտությունն ու փիլիսոփայությունը սկսում
էն զբաղվել մի շարք իդեալիստական հարցադրումներով, աշ-
խատելով ժողովրդի ուշադրությունը յրել դեպի մետաֆիլիկան :

Հեղափոխության հետ միասին մի վորոշ հանակարճ գնա-
ցող մանր բորժուական ինտելիգենցիայի մեջ առաջ է գալիս
լըում և հրասթափություն : Սկսվում է վորոնումների մի շրջան,
և փիլիսոփայության մեջ ճայր է առնում պեսսիմիզմի պաշտա-
մունքը : Յերեկա ողեկիցն սկսում է սոցիալիստներին հարցեր
ուղղել, թէ կարող է ձեր սոցիալիզմը վերացնել մահը, ոգե-
զությունը, մեղքի հնարավորությունը և յեթե նրանք պա-
տասխանում են, թէ վոշ, այն ժամանակ նրանք ասում են.
Վորամենք սիսակվել ենք, վոր սոցիալիստ ենք դարձել » և
սկսում են ճաղրել, թէ « ինչու մենք պետք են մտածենք ՅՀ-ի
դարի բնակիչների մասին և ինչու մենք չպետք է զբաղվենք
մեր այսորվա առորյայով, և նրանք կանչում են « Կեցած մուտեն-
տը, թող կործի ապագան » :

Այս հակահեղափոխական հերոսներից մեկն է նաև Սո-
լովուբի Պերեցդոնովը : Ամենից խայտառակը Արցիբաշնի
« Սանին » վեպն է, վորի մեջ ծրոտիզմը հասել և Յայրահեղու-
թյան աստիճանին և Սանինը սեռական քարոյականությունը
մի կողմբ դնելով՝ անգամ իր քրոջ նկատմամբ կիրք է տա-
նում և իր ամենամոտ ընկերոջ գերեզմանի վրա քեզ սարքում:

Հակոբեղափոխական այս ամբողջ տականքը, իհարկե,
վործվե ապդեցություն չի գործում Հակոբ Հակոբյանի վրա:
Ի պատրիվ Հակոբ Հակոբյանի պետք է ասենք, վոր նա այս
անկումային տրամադրությունների շրջանում պահել է 1905
թվի հեղափոխության վերելքի ժամանակի յերգան իր հեղա-

իրախական տրամադրությունների աստիճանը : Ճիշտ ծ, նա հեղափոխությունը անվանում է «Վիրավոր Թոշուն», վոր նախկին ձեզով չի կարողանում վեր թռչել, բայց մրաժամանակ նա համոզված է, վոր այս թոշունը կապահքինի իր վերջերը և կրացի ազնիք վերելք քան նա թուղ է 1905 թվին :

Այս շրջանում Հենրին իրստ կերպով պայքարել է լիկուդատորների դեմ : Հենրինը պաշտպանել է այն տեսակետը, վոր բանվոր գասակարգի առաջավոր ջոկատի դերը պետք է կատարի կուսակցությունը, վորը պետք է նաև ղեկավարի բանվորական շարժումը, միացնի և ուղղություն տա պրոլետարիատի գասակարգային կովկին :

Կուսակցության այս դերը անհրաժեշտ էր շեշտել ռեակցիոնի շրջանում, վորովհետև կուսակցությունն է պահում և պաշտպանում հեղափոխական կովկի հետևողականությունը, գասակարգային կովկի անհրաժեշտությունը և առանց կուսակցության այդ գերի, ինչպես գրում է «Կուսակցության պատմության համառոտ դասընթաց»-ը, «անկարելի յեր հաղթել պրոլետարիատի դիմումուրայի համար մզկող կովում»:

Անհակյայի շրջանում իդեալիզմի գիրկն ընկան մի շարք անկայուն սոցիալիստներ, վորոնց դեմ Հենրին ողղեց իր նշանավոր փիլիսոփայական աշխատությունը «Մատերիալիզմ և եմպիրիօֆիզիզմ» : Բազդանովի, Բազարովի և այլոց փորձերը՝ Մարքսիզմը շտկելու համար, Հենրին կազմից ստացան խորտակիչ հարցած : Փիլիսոփայության ֆրանտի այդ լիկովիդատարները իդեալիզմի հետ միասին ընկան նաև կրոնական և միատիկական պառանցանքի գիրկը : Պատմագիտական ֆրանտում այդ մախրառներին և եմպիրիօֆիզիզներին աջակյություն ցույց տվեց Պակրովսկին իր

Հակամարքսիստական ռեսակետներով:

Այդ բոլորն առանձնապես վարանգավոր եր Ստոլփրայինյան ռեակցիայի շրջանում, վորովհներու հականեղափոխականները ուզում ենին վարկաբեկել հեղափոխությունը նու բանակարգական ֆրոնտում, առառ սնունդ տալով իշխանական ժառագովաճանը, օրինակարգությանը, սեռամոլությանը և դավանանության զառագովաճանը.

Հակոբյանը ռեակցիայի շրջանում ավել է մի շարք նշանակավոր յերգեր. այդ յերգերը մեր գրականության մեջ բացառի յերեվույթներ ենին : Ընդհանուր ընկերություն, հուսահատության, հուսալգման մոմենտի ժամանակ արտառությոր ֆակտեր ենին այդ յերգերը : Ռեակցիայի շրջանում Հակոբ Հակոբյանը գրում է. «Պարտվեց հեղափոխությունը, կենցու հեղափոխությունը» : Ռեակցիայի շրջանում գրած վատանակորների մեջ նա գուշակում է, վոր վերջիվերջո ապագան պատկանում է պրոլետարիատին, ուստի և նա ժամանակավոր դժվարություններին չի հուսահատվում, չի ընկենվում, հավատալով գալիք հեղափոխության հաղթանակին :

Այդ նույն շրջանում, յերբ վոր կինը դիտվում եր միայն իրեկ հաճույքի առարկա, շատ հետաքրքրիր և Հակոբ Հակոբյանի վերաբերմունքը առհասարակ դեպի կինը : «Նոր առավոտ» պատմայում Հակոբ Հակոբյանն իր յերկի հերոսունուն մանր բուրժուական իդիլիային տանում է դեպի հասարակական կյանքի ուղին և նրան առաջնորդում է դեպի «Մարդկության ապագա սիրտը, այսինքն դեպի գործարաններ իր հերոսունուն կանցում է ինքիվիդուալիզմից դեպի կոլեկտիվիզմից» :

Հակոբ Հակոբյանի աշխատանքի յերգը մանր բուրժուական ինտելիգենտների գրած յերգին տարբերվում է նրանով,

Առ նաշի զանում սոսկ կարեկցություն զարթեցնելու համար դեպի բանվորը, այլ նա հավատում է վերջինիս ստեղծագործական կարողությանը, նա հավատում է նրա, բանվորի, մի նոր աշխարհ ձեռք բերելու հզորությանը։ Հակոբ Հակոբյանի ստեղծագործության մեջ անդրադարձել է բանվորական հոգեբանության աստիճանական զարգացման ետապները։ Նա տաշիս և այն ուղին, վորն անցել է պրոֆեսիոնալ բանվորը սկսած նրա կուսական անկեղծ շահագործումից, գյուղի հետ կապված մտայնությունից մինչև կաղմակերպված դիմադրությունը կապիտալիստին և ինտերնացիոնալիստական գաղափարախոսությունը։

Ինեակցիայից հետո հեղափոխության վերելքը սկսում է Լենայի դեպքերից։ Լենինը Լենայի դեպքերը համարում է հեղափոխության վերելքի նախահարապետը, և իսկապես, Լենայի դեպքերից հետո բանվորությունը ժամանակավոր դադարի շրջանը փակելով՝ սկսում է իր հեղափոխական կոհիվները՝ իր գործադրուները և, ինչպես հաշվել են, Լենայի դեպքերից հետո, մի կարճ ժամանակաշրջանակում տեղի յէ ունենում 2000 գործադրու, վորին մասնակցում են մոտ 750 հազար բանվորներ։ Լենայի դեպքերի ժամանակ շատ ցայտուն կերպով յերեվում և ցարիկմբ և բուրժուազիայի կապը։

Ինչպես հունվարի 9-ին ցարիկմբ գնդականարեց ժանդարմերիայի միջոցով բանվորների խաղաղ ցույցը, այնպես ել Լենայի դեպքերի ժամանակ նահանգապետը գնդականարեց Լենայի այն բանվորներին, վորոնք գալիս եյին նրա մոտ վորպես պատճամավորներ։ Լենայի դեպքերի ժամանակ 270 բանվորներ վոհվեցին, սպանված և վիրավոր։

Հակոբ Հակոբյանի քաղաքական-հասարակական աշ-

խարհայացքի տեսակենտիկ շատ կարեվոր է նրա պատմա-հայ-
յողությունը։ Քննադատության մեջ մի սխալ կարծիք է յե-
զել Հակոբ Հակոբյանի մասին, իբր թե նա ընկեր Յայրա-
հեղության մեջ և ժխտել է անհատի դերը պատմության մեջ։
Այս կարծիքը սխալ է։ Հակոբյանն իր «Խստվաճները
խոսեցին» պոեմայում յերգում է անհատ հերոսներին,
վորոնք, ինչպես ասում է, «յեթէ ուզենան, կիրիսն յերկրա-
գնդի ընթացքը»։ Վորեպէ մակերեսային մտածող սրանից կա-
րող է յեպրակացնել, վոր Հակոբյանը գերազնահատել է ան-
հատի դերը պատմության մեջ։ Բայց թե վերոհիշյալ կարծի-
քը, և թե այս կարծիքը, յերգուսն է սխալ են։ «Խստվաճ-
ները խոսեցին» պոեմայի մեջ Հակոբ Հակոբյանը մի շատ
կարեվոր խոստովանություն է անում։ Նա ասում է, վոր
«Իր ազգայնամոլի ուղեղը խարտուցել է բանվորական խար-
տուցներով»։ Ինչպես հայտնի յէ Հակոբյանի կենսագրու-
թյունից, նա իր պատաճեկական տարիներին տարվել է
Գամառ Քաթիպայով, սակայն այս հանգամանքը խորը ճեղք
չի թողել նրա ստեղծագործության վրա։ Ճիշտ է, նրա վո-
ճի մեջ յերբեմն մենք նկատում ենք վորոշ իդեալիստա-
կան մոտեցում, որինակ Հակոբյանն ասում է. «Ճշմարտու-
թյուն - ահա հավատիս վստմ հանգանակ»։ ուրեմն վոճի մեջ
վորոշ կրոնական արտահայտություն կա, կամ խորձերի
մասին գրում է՝ « Յեզ դու շդրտես նա յերգում ե, թե
լուս աղոթում»։ Այնուհետև՝ « Արել յելնում ե իբրև մանուկ
արքա»։ Նա գյուղից յեկան բանվորի աշխով նայելով մենք
քաղաքին, Թարթառի վշշուց համեմատում է գործարանի
ազմուկի հետ, աջլորի կանչը՝ սուլիչի ձայնի հետ։
Յեզ, իհարկե, այս բոլորը Հակոբյանի ստեղծագործու-

թյան մեջ մնայում ելնմեա չեն, նա իր հրմնական աշխար-
հայացազ հավատարիմ և մնացել Հենքնիպսրի և շարունա-
կել և բննշվիրիների դեմ կուղել և հերթել նրանց տեսա-
կետը, թէ՝ հեղափոխության մեջ առաջատար ուժը պետք
է լինի բորժուացրած։ Կենքնին հետեւելով՝ Հակոբյանը
հեղափոխության զեկը հանձնել է պրոլետարիատին, գյուղա-
ցրության ոժանդակությամբ։

IV.

Հակոբ Հակոբյանը իբրև լիբրի հանգիսանում և հրմ-
նադիրը հայ պրոլետարական պոեզիայի, հեղափոխական ոլ-
մանարիպմի և սոցիալիստական ռեալիզմի։

Իբրև պրոլետարական պոեզիայի հրմնադիր, նա ամբողջ
Միության մասշտաբով առաջիններից մեկն է յեղել։ Դեռք
է նկատի առնել, վոր Հակոբ Հակոբյանը իր սկզբնական բնույթ
կրող յերգերից հետո վճռականացնելով կանգնել է պրոլետար-
կան դիրքերում։

Իր բանաստեղծությունների առաջին ժողովածուն հրա-
մարակել է 1899 թվին։

Ինչ նորություններ եր բերում Հակոբ Հակոբյանը։ Ամենից
առաջ նրա բանաստեղծության առանձնահատկությունն այն է,
վոր հեղինակը ոպարիսիպմով և նայում կյանքին՝ հաստատ
հավատ ունի դեպի ժողովրդի լավագույն ապագան։

Ժողովածուն մեջ իր գովար նվիրում և աշխատավորների
արդար վաստակին և բազուգում և, դժբուում տիրապետող
կապիտալիստական պրատեմի դեմ։

Բանաստեղծությունների առաջին ժողովածուն հասկա-
նշական է նաև նրանով, վոր այստեղ նկատվում է բանա-

տեղնի կանց ժողովրդական բանահյուսության հետ : Յեփիրով,
Հակոբ Հակոբյանը ժողովրդական բանաստեղծ է, վոչ միայն
իր գաղափարների դրվանքով, վոչ միայն իր բանաստեղծական
կուլտուրայով, այլև իր խոսքի ձեփական առանձնահատկու-
թյուններով : Նրա ժողովրդական բանաստեղծությունները աշքի
յեն ընկնում իրենց պարզ լեզվով և բնական վոճով :

Հայ քննադատական գրականության մեջ յեղել են Շարդիկ,
Վորոնք աշխատել են Հակոբ Հակոբյանի սկզբնական ստեղծա-
գործությունները չոչոց տալ իբրև նացիոնալիստական . գա
սիսալ ե : Հիմնականում Հակոբ Հակոբյանի սկզբնական բանա-
ստեղծությունները կրում են ժողովրդական - աշխատավորական
բնույթ : Բանաստեղծը հանդիսանում է իբրև ոպովիչիա՝ լազի
և վշտի գրականության դեմ և տալիս է իր կովի և ցասման
յերգերը :

Ի հարկե, մի բան Ֆշմարիտ ե, վոր Հակոբ Հակոբյանի յե-
րախայրիքը կուտ պրոլետարական բնույթ շոներ և դա հա-
գեցված եր ագրարային - գյուղապետական կոլորիտով, բայց սրա
հետ միասին պետք է նկատի առնել, վոր, ինչպես չոչոց
ե տվել ընկեր ԱՏԱԼԻՆԸ, Անդրկովկասում սովորական, Նախ
քան 1905 թ. հեղափոխությունը, հենց նման ժողովրդական
աշխատավորական բնույթ և ունեցել : Զուտ բանվորական կենտ-
րոն ե յեղել միայն Բագուէ, իսկ մյուս կենտրոնները
կրել են միայն գյուղապետական - ագրարային բնույթ :

Հակոբյանի յերգերը չուտ պրոլետարական բնույթ են
կրում 1905 թվի հեղափոխությունից սկսած : Իր այնպիսի նշա-
նավոր բանաստեղծություններով, ինչպես են «Մի զարկ տվեք»,
«Նահատակներին» (Մեռաք, շկորաք), «Գալիս ե, զալիս» (Կրեմը
կոփում ե), նա դառնում է վոչ միայն հեղափոխության զա-

տագով, այլև կանգնում է պրոլետարական առաջավայր գիր-
քերում:

1917 թվի հեղափոխությունից հետո, Նրա ստեղծագործու-
թյան հետ-Հոկտեմբերյան շրջանում, Հակոբյանը նոր արժեք
և մուշնում հայ գրականության մեջ իր «Վոլոխութրոյով» և
«Երրկանալ»-ով: Նրա այն խոսքը թե «Յեկալ են համբայր
տալու քո նարաված հողին» չույց ե տալիս, վոր մեր յերկրի
վռազման և ելեկտրիֆիկացիայի խնդիրները բանաստեղծը
դրել ե հրմնական հարցերի շարքում:

Մի խոսքով՝ կարելի յէ Հակոբ Հակոբյանի բանաստեղծու-
թյունները բաժանել յերեք շրջանի:

1. Դեմոկրատական - աշխատավորական տրամադրությունների
շրջան: 2. 1905 թվականի հեղափոխության շրջան և 3. Հոկ-
տեմբերյան հեղափոխության շրջան:

Վարեն և առաջին շրջանի հրմնական բնութագրը. Գյուղքը
քաղաք յեկան բանվորը բերել է վորաշ մորալ - նամուս և
զայրաթ. նա շահագործում է, բայց հրմնականում դեռ չի
դիմադրում: Նրա համար զարձարանը տանջանքի վայր է:
Աշխատանքը կատարվում է այստեղ տեխնիկակեն հետամնաց
պայմաններում. լինում են հաշմանդամության, մահացության
գնացքներ: Բանաստեղծը գրում է «և իմ յերգերի հերոսները-
տանջանքի մարմնացումն են». տանջանք պատճառում են
կիսաքաղցան գոյաւթյունը, շնորհ աշխատավարձը և այս անջ-
կազներին բանաստեղծն անվանում է և կարդի կավակներու:

Գործարանատերը հանդես է գալիս վորածս տպրուկ աղա-
և հագրանում է բանվորների քրտինքով: Բանվորների
դրությունը բանաստեղծը համարում է «հանր լուն»:
Այս շրջանում գործարանը պատկերացնում է իրու հրեշ,

գործարանը արևախում սարդ է, նա թաղում է կենդանի մարդուն, ևս մի հսկա գամբարան է :

Բանաստեղծը յերգում է նրանց, «ովքեր կյանքի խնջուքից անմաս էն ո : Այս ճուռից հրշեցնում է և վետից Խսահակյանի և Արք, մեր սիրություն վատանազորը, վարտեղ բանաստեղծը նոյն միտքն է արտահայտում .

«Մենք աշխարհի խորի տղերքն ենք,

մեզ կայ չկա աշխարհից »:

Յերկրարդ շրջանը՝ 1905 թվի հեղափոխության շրջանն է : Այստեղ բանաստեղծը հանգես է գալիս կավակերպված և զրտակից . թե բանվորական մասսաները և թե ինքը՝ բանաստեղծը տոգորված են լավատեստթյամբ : Տոգորված լինելով լավատեստթյամբ՝ գտնում են, վոր հեռու չի բախտավոր որը : Այժմ բանաստեղծը պնդում է, վոր գործարանը բերում է «Նոր կյանքի յերգեր ո :

Բանաստեղծը տալիս է իր հեղափոխության կողը « Զարկեք, քանի յերկարն է տաք տաք »:

1905 թվի հեղափոխության պարտությունից հետո սկսվում է ռեակյալի շրջանը, Բանաստեղծը այդ շրջանում յերեք շի կորցնում իր հավատը դեպի լավագույն ապագան, և ասում է « և կուպար և կուպել յերկինքը, վոշինչ, այսորն ծլ կանչցնի »: Բանաստեղծը ամեներն պեսսիմիրված շունի, սրան կարող է ապացույց լրացլ այն, վոր հեղինակը շարունակ յերգում է դարձուն : Հեղինակը աշնան յերգեր շունի : Առակցիայի շրջանում՝ նա յերգում էր « Զարթոնքի » յերգերը : Դա բռնված հավատով ասում է, վոր մոտ է լուսաբայրը և սրա հետ միասին նա յերգում է հեղափոխական բնիքայքում տուժած, բանաստեղծական, աքառորդան,

կախաղան բարձրացված մարտիկներին :

Յերրորդ լրիքանը՝ Հոկտեմբերյան հօդագիրության շրջաններու մասնաւորապես այժմ սիրում եւ գործարանը, ինչպես նորափառան՝ նորանարարն .

« Սիրում եմ, սիրում նուս շօգին,

նրա շահ ու ժիոյը, նրա հոգին »:

Աշխատանքը, վորր առաջ բնո եր, այժմ դարձել ե նոգու պարձանք կամ ինչպես ընկեր ԱՏԼԵԼԻՆԸ ե ասում, « պատուի գործ »: Մարդը և մեքենան սիրում են իրար և համերաշխ գործում: Խենթ մեքենան այժմ դարձել ե մարդու ընկերը .

« Նոր գործարանը նման տաճարի,

Ուր սակառնում է հոգին Շանեարի »:

Հակոբ Հակոբյանը հանդիսանում է քաղաքական պատվիրայի կլասիկը: Նրա վուտանավորների մեջ հիմնականն այն է, վոր նա իր բոլոր յերգերը գրել ե քաղաքական անկ ու դարձի կուպակությամբ, կամ ինչպիս ասում են՝ գրել ե քաղաքական առիթներով :

Բանաստեղծությունների այն ժողովաճարներ, վորը Հակոբ Հակոբյանը հրատարակել է 1899 թվին, կա մի վուտանավոր, վորը կրում է « Մեր ցակը մեծ ե » վերնագիրը. այս բանաստեղծությունը շատ բնորոշ ե ապագա հեղափոխությանը իրեն նվիրող բանաստեղծի համար :

Այստեղ բանաստեղծը յերգում է « Ճանր կարիքի » յերգը և խոստանում է ամոքել թշվարի սիրու, լայալի, վոգին. « Յերբ մեր ամրոխն ել մեզ պես ցավ ունի

Յեկ, նրա ցավն ել, մեր սրտին առնենք,

Յերկուսիս դարդը պետք է մեկ լինի,

Յեկ, նրա ցավն ել մեր ցավին խառնենք »:

Ինչպես այս վոտանավորից յերթվում է, բանաստեղծը գրական ասպարեզ ծ իջնում «ամբոխին» այսինքն՝ ժողովրդին հառայելու հաստատ վորոշումով։

Նա բանաստեղծությունների յերկրորդ ժողովաճուն, վոր նրատարակվել է 1905 թվի հեղափոխության ժամանակ, վերնագրված է «Աշխատանքի յերգեր»։ Այս բանաստեղծությունների ժողովաճուն իր վրա կրում է իր դարաշրջանի բոցավառ վոգեվորության կնիքը, «Աշխատանքի յերգեր»-ն այստեղ կապված էն հեղափոխական ընդունումների, բոցավառ տրամադրությունների հետ։ Այս ժողովաճունը մի շատ պերճախոս մոտած ունի՝

«Միրում եմ կոհիվ Ընդդեմ բռնության,

Կովի մեջ ե լոկ իմ մնջորրություն,

Կովեցեք և դուք ։ Կոհեր մաքառման.

Կովով պիտ զունիք դուք յերգանկություն»։

Շատ կարծվոր է նշել «Աշխատանքի յերգեր»-ի պատկերավորությունը։ Բանաստեղծը հեղափոխությունը պատկերացրել է փոթորկի և յերկունքի սիմվոլներով։ Նա այստեղ գրելով իր «Հեղափոխություն» բանաստեղծությունը, փոթորկի պատկերով տալիս է հեղափոխության ցնույնութիւն նկարագիրը։

«Տեսել ես ընկեր ալեկոծումը ահեղ ովկիանի։

Ուր յերկու ալիք, շարժուն սարի պես իրար են վասում։

Առաջին հեղափոխության ժամանակ բանաստեղծի կապր հեղափոխական մասսայի հետ սերտ ե և նա հնարավորություն ե ունենում ստեղծելու մարտական պոեսիայի լավագույն նմուշները, ինչպես են՝ «իմ աշխարհը», «Յերկու ախոյան», «Մեկ ել, մեկ ել», «Հեղափոխություն» և այլն։

Այստեղ նորություն են նաև այն, վոր բանաստեղինը գործառնի բոլոր թերությունները ցույց տալով հանդերձ՝ շետում և նաև նրա կազմակերպչական դերը։ Այստեղ մասնաւում և նաև «Տեսը» միանում է կոլլեկտիվ «Յեսի» հետ։ Ինչպես բանաստեղին եւ ասում «ապագա շենքի հրմաք կռելու համար»։ Ըստ հետաքրքրական և նաև գործադույլի գեղարվեստական նկարագիրը։

«Սուլիջ խրոխտ և ապդանջանող,

Քաղաքանայրի զործարաւաններին գուժում և բանթող,

Յեզ մի վայրկյանում ուր հազար ձեռքեր

Ալիքի նման փոթորկում եյին,

Ու հազար մուրճեր և մեքենաներ

Առյունի նման հոնդում եյին -

Կանգ առան հանկարճ»։

Գործադույլի ժամանակ դասակարգացին կոխվի յեռում եւ, սուլիջը դադար կանչելով կատաղեցնում է կապիտալիստին, կամ ինչպես բանաստեղին եւ ասում «գրասենյակում թագնիած այդ ոճին»։ Վորոր գործադույլը խափանելու համար դիմում եւ կառավարության աջակցությանը։ Այդ բանաստեղինությամբ Հակոբ Հակոբյանը պաշտպանում է ցարիկությունը իորդուակելու անհրաժեշտությունը և հակառակ տրեգունիոնիկությունը, նա կանգնում է լենինյան այն տեսակետի վրա, վոր նա արտահայտել եւ «ինչ անել» իր նշանավոր աշխատության մեջ։

Հենց այս իմաստով խիստ բնորոշ է Հակոբ Հակոբյանի մի քառյակը։

«Հեյ, Զեզ մատաղ, բանվոր տղերք,

Մեկ ել, մեկ ել մի զարկ տպեք.

Մի զարկ տպեք զարի գահին,

Վոր խորտակվի նա հրմնովին»։

Գրական ուղղության տեսակետով պետք է նշենք, վոր Հակոբ Հակոբյանը կյանքը, մանավանդ գործարանի նկարագրության ու ուսուցչությանը: Նա գնում է աշխատանքի պրոցեսի ճշգրիտ պատկերացումը և սրա հետ միասին նրա գնդարվեստորման կոնքրետ նրբանկարը: Որինակ՝ ինչպես և նա նկարագրում գործարանի քուրան:

« Քուրան ե վառվում, փեշում կատաղած
Ամեն անկյունից, վորպես վիշապներ
Կարմիր կրակը լեկուներ հանած՝
Ողջ լուսնով յերկարն ե ծամում –
Ծուփ – Ծուփ շիկանում »:

Հակոբ Հակոբյանը ուսակցայի ժամանակ յերգում է ընկած հերոսներին իր նշանավոր «Մեռան, շկորան» և «Եահատակներ» վոտանավորներով:

« Նրանք մեռան հեղափոխության հիմքը հպարտ յերգելով,
Հիաղթված »: Բանաստեղծը գուշակում է գալիք իններորդ ալիքը: Նա շի վախճնում տիրապետող ուսակցայիր, նա գտնվում է պայքարի առաջավոր դիրքերում և կոչ է անում ցրցած կինզորներին շնուսահատկե, և նորից կովի յեւնել.

Աշողմը նոր դադրան, թեվերն ե պարզում, զուժում փոթորիկ.

Զգայուն ձովը թափով յերազում իններորդ ալիք .

Յեւ մթնոլորտում զասկոտ հրդեհի կայնը բորբոքվում
Հզոր – վիթխարի, անխուսափելի վրեժը կոփվում »:

